


1.2.7. Առևտուր և այլ ծառայություններ  
(սպառողական շուկա)

ՀՀ սպառողական շուկա ( առևտրի շրջանառության և ծառայությունների ծավալը)

	2006թ. հունվար-փետրվար		Ընդհանուրի նկատմամբ, %	
	ընդամենը, մլն. դրամ	2005թ. հունվար-փետրվարի նկատմամբ, %	2005թ.	2006թ.
<b>Առևտրի շրջանառության և ծառայությունների ծավալը, ընդամենը</b>	<b>178617.4</b>	<b>114.4</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>
<i>այդ թվում՝</i>				
Առևտրի շրջանառությունը, ընդամենը <i>դրանից՝</i>	119732.4	110.6	69.9	67.0
ավտոմեքենաների առևտուրը <sup>1</sup>	9146.6	145.0	4.1	5.1
մանրածախ առևտրի շրջանառությունը	91130.5	106.9	55.1	51.0
Ծառայությունների ծավալը	58885.0	120.2	30.1	33.0

Սպառողական շուկայում առևտրի շրջանառության և ծառայությունների ծավալի տեսակարար կշիռները

(%)



2006թ. հունվար-փետրվարին գրանցվել է սպառողական շուկայի ծավալի 14.4 % աճ՝ 2005թ. հունվար-փետրվարի նկատմամբ, համադրելի գներով:

<sup>1</sup> Սույն ցուցանիշը ներառում է ինչպես մասնագիտացված առևտրի կետերի միջոցով իրականացված ավտոմեքենաների, դրանց մասերի և պարագաների վաճառքը, այնպես էլ դրանց տեխնիկական սպասարկումը և նորոգումը:

**Մանրածախ առևտուր**


2006թ. հունվար-փետրվարին մանրածախ առևտրի շրջանառությունը, ընթացիկ գներով, կազմել է 91130.5 մլն. դրամ, որը 2005թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 6.9%-ով: 2006թ. փետրվարին 2006թ. հունվարի համեմատությամբ մանրածախ առևտրի շրջանառությունը, համադրելի գներով, կազմել է 114.7%:

**ՀՀ մանրածախ առևտրի շրջանառությունը 2006թ. հունվար-փետրվարին**

	Շրջանառությունը, մլն. դրամ	Ընդհանուրի նկատմամբ, %
<b>Մանրածախ առևտուր, ընդամենը</b>	<b>91130.5</b>	<b>100.0</b>
<i>այդ թվում</i>		
խանութների	38697.8	42.5
սպառողական ապրանքների շուկաների	30010.2	32.9
գյուղատնտեսական արտադրանքի շուկաների	3550.5	3.9
կրպակների	6991.0	7.7
առևտրի այլ օբյեկտների	11881.0	13.0

**Մանրածախ առևտրի շրջանառության կառուցվածքն ըստ ձևավորման աղբյուրների, 2006թ. հունվար-փետրվարին**

(%)



2006թ. հունվար-փետրվարին ՀՀ մանրածախ առևտրի շրջանառությունում մեծ տեսակարար կշիռ է ունեցել խանութներում և սպառողական ապրանքների շուկաներում իրականացվող առևտուրը՝ 75.4 % (68708.0 մլն. դրամ):

ՀՀ մանրածախ առևտրի շրջանառությունում առանձնակի տեղ ունեն սպառողական ապրանքների շուկաները, որոնցից ստացված հաշվետվությունների տվյալներով և փորձագիտական գնահատականի հիման վրա, 2006թ. հունվար-փետրվարին առևտրի շրջանառությունը, ընթացիկ գներով, կազմել է 30010.2 մլն. դրամ:


**Սպառողական ապրանքների շուկաների առևտրի շրջանառությունը ըստ ՀՀ մարզերի, 2006թ. հունվար-փետրվարին**

	Շրջանառությունը, մլն. դրամ	այդ թվում՝ ընդհանուրի նկատմամբ, %	
		պարենային ապրանքներ	ոչ պարենային ապրանքներ
ք. Երևան	27701.2	11.9	88.1
Արագածոտն	41.7	-	100.0
Արարատ	159.2	-	100.0
Արմավիր	494.7	24.6	75.4
Գեղարքունիք	279.9	14.4	85.6
Լոռի	371.0	22.8	77.2
Կոտայք	281.0	19.4	80.6
Շիրակ	224.1	12.0	88.0
Սյունիք	89.5	-	100.0
Վայոց ձոր	21.6	90.4	9.6
Տավուշ	346.3	23.9	76.1
<b>Ընդամենը</b>	<b>30010.2</b>	<b>12.4</b>	<b>87.6</b>

Հարկ է նշել, որ հանրապետության սպառողական ապրանքների շուկաները հիմնականում մասնագիտացված են ոչ պարենային ապրանքների վաճառքով, որի տեսակարար կշիռը սպառողական ապրանքների շուկաների առևտրի շրջանառությունում 2006թ. հունվար-փետրվարին կազմել է 87.6 %:

**Սպառողական ապրանքների շուկաների առևտրի շրջանառության կառուցվածքն ըստ Երևան քաղաքի և ՀՀ մյուս մարզերի**

(%)



2006թ. հունվար-փետրվարին 2005թ. հունվար-փետրվարի նկատմամբ հանրապետության սպառողական ապրանքների շուկաների առևտրի շրջանառությունում գրանցվել է Երևան քաղաքի շուկաների առևտրի շրջանառության տեսակարար կշռի աճ 1.0 տոկոսային կետով:

2006թ. մարտի 1-ի դրությամբ ապրանքային պաշարները մանրածախ առևտրի օբյեկտներում կազմել են 67865.7 մլն. դրամ, իսկ ապահովվածությունը՝ 87 օր:

ՀՀ սպառողական շուկայում իրենց ուրույն տեղն ունեն գյուղատնտեսական արտադրանքի շուկաները: 2006թ. հունվար-փետրվարին գյուղատնտեսական արտադրանքի շուկաների առևտրի շրջանառությունը կազմել է 3550.5 մլն. դրամ<sup>1</sup> կամ ընդհանուր առևտրի շրջանառության 3.9% :

<sup>1</sup> Ցուցանիշը չի ներառում գյուղատնտեսական արտադրանքի չկազմակերպված շուկաների առևտրի շրջանառությունը :


**Ծառայություններ**

2006թ. հունվար-փետրվարին մատուցված ծառայությունների ծավալն ընթացիկ գներով կազմել է 58885.0 մլն.դրամ, որը 2005թ. նույն ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 20.2 %-ով:

2006թ. հունվար-փետրվարին 2005թ. հունվար-փետրվարի նկատմամբ ծառայությունների ոլորտում արձանագրվել է սակագների 2.7% հավելաճ, որը հիմնականում պայմանավորված է սոցիալական (9.6%), կրթության (8.6%), զբոսաշրջության (3.1%), տրանսպորտի (3.8%), առողջապահության (1.4%), հյուրանոցների և ռեստորանների (3.9%), կոմունալ (3.0%) ծառայությունների սակագների հավելաճով:

**Ծառայությունների կառուցվածքը  
2006թ. հունվար-փետրվարին**

(%)



2006թ. հունվար-փետրվարին ծառայությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են կազմել տրանսպորտի (13686.2մլն.դրամ) և կապի (15320.6մլն.դրամ) ծառայությունները, համապատասխանաբար՝ 23.2 և 26.0%:

Ծառայությունների կառուցվածքում համեմատաբար բարձր տեսակարար կշիռ ունեն ֆինանսական (4244.3մլն.դրամ), կրթության (3563.2մլն.դրամ), առողջապահության (3746.9մլն.դրամ), հյուրանոցների և ռեստորանների (2162.6մլն.դրամ) ծառայությունները, համապատասխանաբար՝ 7.2, 6.1, 6.4 և 3.7%: